

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ամփոփում

Ընդունված իրողություն է լեզվաբանության զարգացման ընթացքային մի պահի կանգ առնել, քննական հայացքով ձեռքբերումներն ամփոփել: Հայ ոճագիտական միտքն ունի կես դարից էլ ավելի զարգացման ընթացք: Այս ոլորտում ստեղծվել են տեսական մենագրություններ, տարաբնույթ հոդվածներ, որոնց վերաբերմամբ ժամանակն է վերլուծական հստակ վերաբերմունք դրսևորելու: Մանավանդ եթե նկատի առնենք ոճագիտության և խոսքի մշակույթի արագ զարգացումը, ապա, կարծում ենք, որոշակի գնահատումներով եղածն ի մի բերելը անհրաժեշտություն է:

Հոդվածում անդրադարձ է կատարվել քերականական ոճագիտական մտքի պատմությանը (1950 - 2020-ական թթ.): Քերականական ոճագիտությունն ուսումնասիրում է քերականական միջոցների ու կառույցների ոճական հնարավորությունները: Առանձնացվում են ձևաբանական և շարահյուսական ոճագիտություն խմբերը, որոնցից յուրաքանչյուրն ունի արտահայտչական յուրօրինակություն: Վերլուծել ենք ինչպես ձևաբանական, այնպես էլ շարահյուսական ոճագիտությանը վերաբերող աշխատանքները, տարբեր հետազոտություններում առկա դրույթները: Մեթոդաբանական հիմք է դարձել եղած տեսական դրույթների համադրումը: Փորձել ենք շարադրանքը ներկայացնել ըստ ժամանակագրության:

Բանալի բառեր և արտահայտություններ. քերականական ոճագիտություն, ձևաբանական, շարահյուսական ոճագիտություն, խոսքի մասեր, արտահայտչականություն, տարբերակային ձև, ոճական արժեք:

Ներածություն

Գ. Վահանյանն այսպես է ներկայացնում քերականության ու ոճագիտության կապը: «Քերականությունը հետաքրքրվում է այն բանով, թե այս կամ այն լեզվական փաստը որքանով է համապատասխանում համազգային լեզվի՝ հանրության կողմից ընդունված նորմաներին և հենց այդ տեսակետից էլ գնահատում է խոսքի կառուցվածքը: Իսկ ոճաբանությունը լեզվական երևույթները գնահատում է մտքերը լավագույն ձևով հաղորդելու տեսակետից: (...) Քերականությունը վերջանում է այնտեղ, որտեղից սկսվում է ոճաբանությունը: Առաջինը զբաղվում է լեզվի

կառուցվածքի, բոլորի կողմից ընդունված, ճանաչված և բոլորի համար պարտադիր նորմաների, օրինաչափությունների արձանագրմամբ, իսկ ոճաբանությունը հետաքրքրվում է լեզվական ոճերով, մտքի ճիշտ արտահայտման ձևերով»¹: Քերականական ամեն մի սխալ կարող է նկատվել և հաստատվել բոլորի կողմից, իսկ ոճական փաստը կարող է վիճելի լինել, ընդունելի կամ ոչ ընդունելի, պատճառաբանվել կամ չպատճառաբանվել: Ըստ էության, քերականական գիտելիքները ոճագիտության հիմքն են: Լեզվական նյութի թերի իմացությունը ազդում է ոճի վրա՝ վերածվելով մտքի սխալների:

Քերականության երկու բաժիններին համապատասխան՝ քերականական ոճագիտությունը լինում է՝ *ձևաբանական ոճագիտություն*, *շարահյուսական ոճագիտություն*:

Հարցի ուսումնասիրությանն անդրադարձել են տարբեր լեզվաբաններ: Կանդրադառնանք այն հեղինակների առաջադրած քերականական տեսական դրույթներին, որոնք աչքի են ընկնում հետաքրքիր հարցադրումներով և, ըստ էության, որոշակի ներդրում են ունեցել հարցի քննության մեջ:

Մեթոդաբանությունը

Մեթոդաբանական հիմք է դարձել եղած տեսական դրույթների համադրումը: Կիրառվել են վերլուծական, համեմատական մեթոդներ: Փորձել ենք շարադրանքը ներկայացնել ըստ ժամանակագրության:

Ձևաբանական ոճագիտության պատմությունից

1950-60 ական թթ.-ին հայերենագիտության մեջ ավելի հաճախ քննարկվում են ձևաբանության հարցերը²:

¹ Տե՛ս **Գ. Վահանյան**, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 1956, էջ 157:

² Այդ շրջանի ձևաբանության հայտնի ուսումնասիրություններից են՝ **Հ. Բաբսեղյանի** «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» (1953), **Ա. Աբրահամյանի** «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (1953), «Բայը ժամանակակից հայերենում» (1962), **Ս. Աբրահամյանի** «Արդի հայերենի դերանունները» (1956), «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» (1959), «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» (1965), **Մ. Ասատրյանի** «Բայի սեռը ժամանակակից հայերենում» (1959), **Հ. Օհանյանի** «Ածական անունը ժամանակակից հայերենում» (1962), **Գ. Գարեգինյանի** «Շաղկապները ժամանակակից հայերենում» (1963), **Ա. Մարգարյանի** «Հայերենի հարադիր բայերը»

Նորագույն շրջանի ոճագիտական մտքի առաջին աշխատանքերում հիմնականում ներկայացվում էր խոսքի մասերի լեզվական մակարդակի սահմանումները. ընդհանուր իմաստ, ձևաբանական առանձնահատկություն, տեսակներ, շարահյուսական դեր: Խոսքի մասերի ոճական արժեքի քննությունը երկրորդական էր: Աստիճանաբար երևան եկան տարբեր աշխատանքներ, որոնցում ինչ-որ չափով բացատրվում էր խոսքի մասերի ոճական նրբությունները:

Ձևաբանական ոճագիտության վերաբերյալ գրված աշխատանքներից առանձնանում է Ռ. Մկրտչյանի «Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն» մենագրությունը, որում գիտնականը քննել է ժամանակակից հայերենի խոսքի մասերի ոճական առանձնահատկությունները, ձևաբանական միավորների արտահայտչական հնարավորությունները քննելիս առանձին ուշադրություն է դարձրել նրանց իրավիճակային կիրառությունների ոճական արժեքի բացահայտմանը³: Կարծում ենք, որ Ռ. Մկրտչյանի գիրքը հայ լեզվաբանության մեջ ժամանակակից հայերենի ձևաբանական ոճագիտության վերաբերյալ վերջին գիտական ուսումնասիրությունն է:

Ստորև անդրադառնանք *նյութական, քերականական, վերաբերմունքային* իմաստ արտահայտող խոսքի մասերի ոճական արժեքին վերաբերող մի քանի հարցերի հայ լեզվաբանների քննությունից:

Մեր տպավորությամբ, հարցի քննությունը սկիզբ է առել Գ. Վահանյանից, որը ամփոփ ներկայացրել է մի քանի խոսքի մասերի ոճական դերը: Գ. Վահանյանի կարծիքով, նախասովետական շրջանում *մեր, մենք, դուք, մեզ, ձեր* անձնական դերանունների իմաստային նրբերանգները տարածված չեն եղել⁴: Լեզվաբանը քննարկում է դրանց գործածության օրինակները Տերյանի, Իսահակյանի, Շիրազի և այլոց գործերում: Սակայն, աշխատանքն աչքի չի ընկնում ոճաբանական խորքային վերլուծություններով:

1950-60-ական թթ.-ին լեզվաբանները (Հ. Բարսեղյան, Ա. Աբրահամյան, Ս. Աբրահամյան, Մ. Ասատրյան և այլք) առանձնահատուկ ուշադրություն են դարձրել քերականական կարգերով ամենահարուստ խոսքի մասին՝ բային՝ ընդգծելով ոճական կիրառության ամենից ավելի

(1966), **Էդ. Աղայանի** «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնրահումը» (1967) գրքերը և այլն:

³ Առավել մանրամասն տե՛ս **Ռ. Մկրտչյան** «Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն», Ե., 1992, էջ 4:

⁴ Տե՛ս **Գ. Վահանյան**, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 1956, էջ 163:

կարևոր դեպքերը: Ըստ Պ. Պողոսյանի՝ բայն ունի ինչպես *ստատիկ*, այնպես էլ *ռեյյատիկ* կիրառություններ: Վերջինս կապվում է խոսքի էմոցիոնալ կողմի հետ և նրան տալիս է ոճական երանգավորում: Հեղինակը գրում է. «Գրական հայերենը բարբառների համեմատությամբ եղանակային ձևերի եղանակաժամանակային քիչ կիրառություններ ունի. այն խուսափում է երկրորդական բաղադրյալ ժամանակների գործածությունից, ձգտում է եղանակաժամանակային կիրառությունների պարզեցման և այդ ձևերի տարբերի իմաստների գործածության հարստացման»⁵: Նա «Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում» գրքում քննում է բոլոր եղանակային ձևերի ոճական կիրառությունները. սահմանական եղանակ (ներկա, անցյալ անկատար, ապառնի, անցյալ ապառնի, վաղակատար, անցյալ վաղակատար, հարակատար, անցյալ հարակատար, պոտենցիալ, անցյալ պոտենցիալ, անցյալ կատարյալ), ըղձական եղանակ (ապառնի, անցյալ), կատեգորիական եղանակ (ապառնի, անցյալ), անհրաժեշտական (հարկադրական) եղանակ (ապառնի, անցյալ), հրամայական եղանակ: Մեր տպավորությամբ, Պ. Պողոսյանի գիրքը հայ լեզվաբանության մեջ ժամանակակից հայերենի բայական համակարգին նվիրված հաջող խորքային ուսումնասիրություններից մեկն է: Հարցի բարեխիղճ քննություն են կատարել Գ. Ջահուկյանը, Ֆ. Խլղաթյանը, որոնք փաստում են, որ բայի ժամանակային ձևերն ունեն իրենց հիմնական իմաստները, սակայն երբեմն կարող են ստանալ ոճական տարբեր կիրառություններ կամ հանդես գալ մեկը մյուսի փոխարեն, ինչպես՝ խոսակցական լեզվում ներկայի փոխարեն կարող է գործածվել ըղձական ապառնի, ներկա ժամանակը կարող է արտահայտել ոչ միայն խոսելու պահին, այլև ընդհանրապես, պարբերաբար կատարվող, սովորական գործողություն և այլն⁶:

Ձևաբանության ոլորտում արժեքավոր ներդրում է Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» եռհատոր ուսումնասիրությունը⁷: Հեղինակի առաջադրած ձևաբանական տեսական հիմունքները մեծապես կօգնեն մեր լեզվի այս ոլորտի ուսումնասիրողներին:

⁵ Տե՛ս Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Ե., 1959, էջ 218:

⁶ Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Ե., 1976, էջ 124-125:

⁷ Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» գրքի առաջին հատորը լույս է տեսել 1970 թ.-ին, երկրորդ հատորը՝ 1973 թ.-ին, երրորդ հատորը՝ 1977 թ.-ին:

Հաջորդիվ, լեզվաբանները ի մի բերելով եղած ոճագիտական տեսական հիմունքները՝ մատնանշում են, որ հայերենի խոսքի մասերի համակարգում ոճական ավելի մեծ հնարավորություններ ունեն գոյականի, ածականի, դերանվան, բայի քերականական կարգերը:

Գոյականի ոճական կիրառությունների մասին խոսելիս լեզվաբանները (Գ. Զահուկյան, Ֆ. Խլդաթյան, Ռ. Մկրտչյան) առանձին-առանձին քննել են թվի, հոլովի, առկայացման կարգերի ոճական կիրառությունները: «Գոյականի բոլոր քերականական կարգերն այս կամ այն չափով օժտված են ոճական-արտահայտչական հնարավորություններով, - գրում է Լ. Եզեկյանը,-առավել ևս գոյականի քերականական այն կարգերը, որոնք հարուստ են գուգաձևություններով և ձևաբանական այլ տարբերակներով»⁸: Մեր տպավորությամբ, ոճաբանական առումով բավականաչափ գործուն է թվի քերականական կարգը: Ըստ Ն. Վիրաբյանի, Լ. Մարգարյանի՝ գոյականի թիվը կարող է ունենալ ոճական հետևյալ դրսևորումները.

ա. Հոգնակի թվի իմաստը կարող է արտահայտվել հավաքական իմաստ ունեցող *-ություն*, *-եղեն* վերջավորություններով (ինչպես՝ Ողջ ուսանողությունը մասնակցեց միջոցառումին):

բ. Եզակի թիվը գործածվում է հոգնակիի փոխարեն հավաքական իմաստով՝ տեսակի անուն, երբ նշվում է տվյալ տեսակին պատկանող բոլոր անհատներին բնորոշ հատկանիշ (ինչպես՝ Ձնծաղիկը գարնան առաջին ծաղիկն է):

գ. Եզակի թիվը հոգնակիի փոխարեն է հանդես գալիս նաև բաշխական իմաստով, երբ ամեն մի անդամի վերագրվում է միևնույն առարկան (ինչպես՝ Թերթե ք լրագիրը և սկսե՛ք ցածրաձայն կարդալ):

դ. Նյութական իմաստ ունեցող բառերի հոգնակին նշանակում է կա՛մ առանձին տեսակներ, կա՛մ այդ նյութի մեծ քանակություն (ինչպես՝ հողեր, ջրեր, քարեր):

ե. Երևույթների անունների հոգնակին ցույց է տալիս տվյալ երևույթի հաճախակի կրկնություն (ինչպես՝ Ձմռանը սաստիկ ցրտեր եղան)⁹:

Ուսումնասիրության պատմության մեջ ածականին վերաբերող հետաքրքիր հարցադրումներով առանձնանում են Ռ. Մկրտչյանի դիտարկումները, որպես նորույթ՝ որոշ իմաստային խմբավորումներ է կատարել, այսպես՝ գույներ անվանող ածականներ, մարդկանց ներքին-հոգեկան հատկություններ անվանող ածականներ, ծավալային

⁸ Տե՛ս Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., 2006, էջ 249:

⁹ Ն. Վիրաբյան, Լ. Մարգարյան, Հայոց լեզու: Ոճաբանություն, Ե., 2007, էջ 31-32:

հատկանիշներ անվանող ածականներ, գնահատող ածականներ¹⁰: Պ. Պողոսյանը ածականին է վերագրում հակադրության, ժխտականության, աստիճանի և աստիճանավորության, բացառիկության, վերաբերմունքի, համանշտության հատկանիշները¹¹: Ն. Վիրաբյանի, Լ. Մարգարյանի դիտարկմամբ, ածականների բաղդատական և գերադրական աստիճաններն ունեն դրսևորման եղանակների որոշ տարբերություններ, որոնք համապատասխան ոճական հնարավորություններ են ստեղծում.

ա. Գրքային երանգ ունի համեմատության այն եղանակը, որի դեպքում ածականի բաղդատական աստիճանը սովորաբար արտահայտվում է *ավելի* բառով, իսկ համեմատելին դրվում է *քան* նախդիրով (ինչպես՝ Կարենը ավելի բարձրահասակ է, քան Աշոտը):

բ. Խոսակցական լեզվում *ավելի* բառը բաց է թողնվում, իսկ համեմատելին դրվում է բացառական հոլովով (ինչպես՝ Կարենը Աշոտից բարձրահասակ է):

գ. Գրքային է նաև գերադրականի *-գույն* վերջածանցով ձևը, որն ավելանում է ոչ բոլոր ածականներին (ինչպես՝ վատ-վատագույն):

դ. *Ամենա*- մասնիկը ավելի ընդհանուր բնույթ ունի, և համեմատությունն ավելի է շեշտված (ինչպես՝ ամենավատ):

ե. *-Գույն* մասնիկի գործածության դեպքում կարելի է ընդգծել՝ համեմատելի խնդիրը դնելով բացառական հոլովով կամ *մեջ* կապի հետ միասին (ինչպես՝ Սա իմ վատագույն սովորությունն է://Սա իմ սովորություններից վատագույնն է://Սա իմ սովորությունների մեջ վատագույնն է:)¹²

Դերանունների ոճական կիրառությունները, ըստ էության, ամփոփել է Լ. Եզեկյանը. արտահայտչական առումով ավելի գործուն են անձնական, ցուցական, հարցական, հարաբերական դերանունները: Հաճախ ոճական որոշակի նպատակով ուղղակի խոսքը հավաստի ու հաստատական դարձնելու, դեմքի գաղափարն ավելի ընդգծելու նպատակով *ես, դու, նա* անձնական դերանունների հետ միաժամանակ գործածվում են *ինքս, ինքդ, ինքք* դերանունները, որտեղ նշված դերանվանական ձևերը հատուկ շեշտվում են (ինչպես՝ Ես ի՛նքս եմ դա պատրաստել)¹³:

¹⁰ Առավել մանրամասն տե՛ս Ռ. Մկրտչյան, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Ե., 1992, էջ 135-160:

¹¹ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Ե., 1990, էջ 244-247:

¹² Ն. Վիրաբյան, Լ. Մարգարյան, Հայոց լեզու: Ոճաբանություն, Ե., 2007, էջ 33:

¹³ Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., 2006, էջ 267:

1990-ական թթ.-ից բուռն քննարկվում են նաև չթեքվող խոսքի մասերի ոճական կիրառությունները. դրանք, ինչ խոսք, այդքան էլ աչքի չեն ընկնում ոճական նշանակությամբ: Տարաբնույթ դասակարգումներ են երևան գալիս հատկապես մակբայ, կապ, շաղկապ խոսքի մասերին վերաբերող: Պ. Պողոսյանը առանձնացնել է գրական ոլորտի մակբայներ (*լռելյայն, սաստիկ, արտաքուստ, կարոտագին և այլն*), հասարակ ոճի մակբայներ (*մարդավարի, հայավարի, ափալ-թափալ, բարով-խերով և այլն*), հասարակ ոլորտի կապեր (*մեջ, տակ վրա, բացի, դեպի և այլն*), գրական ոլորտի կապեր (*հետևանքով, օգտին, ըստ, վերաբերյալ և այլն*), վերամբարձ ոլորտի կապեր (*ի հեճուկս, հանգույն, ներքո, առ, հանդերձ և այլն*), հասարակ ոճի շաղկապներ (*ու, բայց, թե, ուրեմն և այլն*), գրական ոճի շաղկապներ (*բայց և այնպես, նաև, այլև, սակայն և այլն*), վերամբարձ ոճի շաղկապներ (*քանզի, զի, մինչդեռ և այլն*): Ոճագետը, ինչպես նկատում ենք, փորձել է համակարգել տեսական դրույթները: Վերոգրյալ խոսքի մասերի ոճական դերը գեղարվեստական գործերում նկատելի է միննույն ձևերի գրական ու խոսակցական զուգաձևությունների համատեղ գործածության դեպքում: Ռ. Մկրտչյանի կարծիքով, զգալի արտահայտչականություն են ցուցաբերում հատկապես դարձվածքների կազմում հանդես եկող տարածական կապերը, ինչպես՝ *բախտավոր աստղի տակ ծնվել, սրտին մոտ ընդունել, դարմանի տակի ջուր* և այլն¹⁴: Թ. Շահվերդյանը, անդրադառնալով *վրա* տարածական կապին, նշում է, որ այն շատ դեպքերում հանդես է գալիս կապի քերականական հարացույցում իրեն հակադիր անդամների նշանակությամբ¹⁵: Լեզվաբանը բերում է համոզիչ օրինակներ Զորյանի, Թումանյանի, Դեմիրճյանի գործերից: Այնուհետև՝ ամենայն մանրամասնությամբ ներկայացվել է շաղկապների ոճական դերը: Լեզվաբանները քննել են շաղկապների առանձին տեսակները՝ առանձնացնելով նաև առավել գործածական խմբերը: Հարցի բարեխիղճ քննություն է կատարել Ռ. Մկրտչյանը, որը որպես ամփոփում նշում է՝ շաղկապները կարող են արտահայտել իմաստային սաստկացում, հավելում, հակադրություն՝ բացահայտելով ասույթի թեզն ու հակաթեզը, կարող են ձևավորել խոսքի որևէ հատվածի սկիզբը, վերջը՝ ապահովելով ասելիքի արտահայտչականությունն ու տրամաբանական

¹⁴ Ռ. Մկրտչյան, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Ե., 1992, էջ 275:

¹⁵ Առավել մանրամասն տե՛ս Թ. Շահվերդյան, Ոճագիտություն, Ե., 2010, էջ 158-159:

հազեցվածությունը¹⁶: Լ. Եզեկյանը հավելում է, որ շաղկապների ոճական արժեքն ակնհայտ է դառնում նաև ճարտասանական կառույցներում, բազմաշաղկապության և անշաղկապության դեպքում: Սրանց վերաբերյալ մեզանում կան բազմաթիվ օրինակներ:

Վերաբերմունքային խոսքի մասերի (ձայնարկություն, վերաբերական) ոճական կիրառությունները հիմնավոր ներկայացրել է Ռ. Մկրտչյանը: Դրանց ոճական կիրառությունները սահմանափակ ոլորտ ունեն, այդուհանդերձ անտեսել չի կարելի: Ասպարեզում եղած գրականության հիմքով կարելի է ասել, որ միայն Ռ. Մկրտչյանն է այս խոսքի մասերին վերաբերող տեսական դրույթները զարգացրել:

Ժամանակակից լեզվաբանները (Յու. Ավետիսյան, Ն. Ներսիսյան, Ա. Ադիլխանյան և այլք) քննարկում են բոլոր խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, տարբերակային ձևերը, գեղարվեստական գրականությունից վերցված օրինակների օգնությամբ ներկայացնում այս կամ այն խոսքի մասի ոճական կիրառությունները, որոնք հետաքրքրական են ձևաբանական ոճագիտության տեսանկյունից: Ներկայումս էլ հանձնարարվում են ավարտական, մագիստրոսական թեզեր այս ուղղությամբ:

Շարահյուսական ոճագիտության պատմությունից

Քերականական ոճագիտության այս բաժնին վերաբերող սկզբնական ուսումնասիրություններում կարևորվել են նախադասությունների ճիշտ կառուցման, նպատակային կապակցման, մտքի տրամաբանական կապի ու զարգացման, կապակցման լեզվական-քերականական միջոցների իմացությունը: Մի շարք լեզվաբանները պնդում են, որ ոճագիտությունը չի կարող յուրացվել, մասնավորաբար, առանց շարահյուսական հիմնավոր գիտելիքների: Ուստի ոճագիտական աշխատանքներում քերականական լրացուցիչ տեղեկությունների առկայությունը պայմանավորված է ոճագիտության պահանջներով: Մենք կարծում ենք, որ ոճագիտական աշխատանքներում լեզվական գիտելիքների, մասնավորաբար, քերականական տեղեկությունների մատուցումը ոճականի փոխարեն արդարացված չէ: Շարահյուսական ոճագիտությանը վերաբերող աշխատանքներում հիմնականում քննության են ենթարկվել հետևյալ թեմաները՝ նախադասության ներգործական և կրավորական կառույցներ,

¹⁶ Ռ. Մկրտչյան, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Ե., 1992, էջ 301:

խնդրառություն, միակազմ և երկկազմ, բարդ նախադասություններ, երկրորդական նախադասություններ և նրանց կապակցության միջոցներ¹⁷:

Շարահյուսական ոճագիտության վերաբերյալ աշխատանքներից առանձնանում է Թ. Շահվերդյանի «Դասական գրաբարի շարահյուսական ոճագիտություն» գիրքը, որում առանձին գիտական քննության են ենթարկվել դասական գրաբարի շարահյուսական ոճական առանձնահատկությունները: Լեզվաբանը 5-րդ դարի գրաբար ինքնուրույն և թարգմանական գրական նյութի հիման վրա վերլուծության է ենթարկել հին հայերենի շարահյուսության արտահայտության և պատկերավորման միջոցները, պարզաբանել է վերափոխված տեղն ու դերը գրաբարի լեզվական համակարգում, ներկայացրել է քերականական առանձին իրողությունների նորովի ըմբռնումները և մեկնաբանությունները¹⁸: Հեղինակի մեծարժեք աշխատությունը նորություն է հայագիտության մեջ. դասական գրաբարի շարահյուսական ոճագիտական հիմնահարցերի համակողմանի, համակարգված քննության առաջին փորձն է:

Մեր տպավորությամբ, նորագույն շրջանի շարահյուսական-ոճագիտական աշխատանքներում նախնառաջ քննարկման նյութ է դարձել

¹⁷ Արևելահայ գրական աշխարհագրի գիտական շարահյուսության հիմքը դրել է **Մ. Աբեղյանը**՝ 1912 թ. հրատարակելով «Աշխարհագրի շարահյուսությունը»: Շարահյուսության ուսումնասիրություններից են՝ **Վ. Առաքելյանի** «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (1957), «Հայերենի շարահյուսություն» (հատոր 1՝ 1958, հատոր 2՝ 1964), «Հայերենի պարբերություն» (1968), **Ժ. Ճմարիտյանի** «Դերբայական դարձվածը արդի հայերենում» (1961), **Ն. Պառնասյանի** «Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» (1961), «Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում» (1970), «Քերականական համանունները ժամանակակից հայերենում» (1979), **Ս. Աբրահամյանի** «Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր» (1962), **Ս. Գյուլբուղադյանի** «Միակազմ նախադասությունը ժամանակակից հայերենում» (1967), **Բ. Վերդյանի** «Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն» (1970), **Հ. Հարությունյանի** «Անդամ նախադասությունները ժամանակակից հայերենում» (1970), **Վ. Քոսյանի** «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» (1975), «Գրաբարի բառակապակցությունները» (1980), «Միջին հայերենի բառակապակցությունները» (1984), «Արևմտահայերենի բառակապակցությունները» (1986), **Խ. Բաղդկյանի** «Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարահյուսությունը» (1976), **Ռ. Իշխանյանի** «Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն» (1986) գրքերը և այլն:

¹⁸ **Թ. Շահվերդյան**, Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Ե., 2007, էջ 2:

խնդրառությունը: Անդրադառնալով խնդրառությանը՝ Գ. Ջահուկյանը գրում է. «Խնդրառության ոճական հնարավորությունները կապված են այն բանի հետ, որ միևնույն կամ մերձավոր իմաստները կարող են ձևավորվել տարբեր հոլովածներով ու կապերով, և, ընդհակառակն, միևնույն հոլովածներն ու կապերը կարող են արտահայտել տարբեր իմաստներ»¹⁹: Պետք է նկատի ունենալ այն, որ հայերենում ոչ բոլոր բառերը կարող են խնդիրներ պահանջել, այսինքն՝ հանդես գալ որպես խնդրառու բառեր: Ըստ լեզվաբանի՝ խնդրառության տարբեր արտահայտություններ, լայն հնարավորություններ ունի բայը (*վիշտ ապրել (զգալ), ապրել իր գործով (տարված լինել), ապրել քաղաքում (բնակվել) կամ փող աշխատել (վաստակել), աշխատել մի հողվածի վրա (հողված գրել), աշխատել հիմնարկում (պաշտոնավարել)*): Շարահյուսական ոճագիտության պատմության մեջ վկայված են ինչպես բայի, այնպես էլ գոյականի խնդրի գործածության որոշ առանձնահատկություններ, որոնք մեկնաբանել են սույն լեզվաբանները՝ բերելով օրինակներ: Հաջորդիվ՝ հետազոտողները ուշադրություն են դարձրել ժողովրդախոսակցական լեզվում տարածված են խնդրառական շեղումներին, որոնք, մեր կարծիքով, օտար լեզուների, մասնավորաբար, ռուսերենի անմիջական ազդեցության հետևանքներն են: Շարահյուսական կապակցության այս եղանակի մասին եղած տեսական դրույթները համակարգել է Լ. Եզեկյանը՝ անդրադառնալով նաև մասնավոր դեպքերին: Լեզվաբանը *խնդրառություն* տերմինին համարժեք գործածում է *կառավարում* տերմինը, ինչը, մեր կարծիքով, այնքան էլ նպատակահարմար չէ²⁰: Կառավարում բառն ունի հարուստ նկարագիր, իսկ այսօր նախևառաջ ընկալվում է որպես գիտություն: Ժամանակակից լեզվաբանները (Լ. Թելյան, Յու. Ավետիսյան, Շ. Գևորգյան և այլք) ամբողջությամբ բնութագրել են նախադասության անդամների կապակցման եղանակները, մասնավորաբար՝ խնդրառությունը: Վերջին ուսումնասիրություններում ներկայացվում են առանձին բայերի համար արդի հայերենում առաջ եկած խնդրառական զուգաձևերը՝ բավարարել պահանջները // պահանջներին, խթանել, խոչընդոտել զարգացումը // զարգացմանը, կախել պատից // պատին և այլն²¹:

¹⁹ Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Ե., 1976, էջ 138:

²⁰ Տե՛ս և Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., 2006, էջ 329:

²¹ Առավել մանրամասն տե՛ս Յու. Ավետիսյան, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Ե., 2014, էջ 188:

Ասպարեզում եղած գրականության հիմքով կարելի է ասել, որ ռճագիտության մասնագետները (Գ. Զահուկյան, Ֆ. Խլղաթյան, Պ. Պողոսյան, Լ. Եզեկյան և այլք) ավելի հաճախ քննարկել են միակազմ նախադասությունները և երկրորդական նախադասությունները ու նրանց կապակցության միջոցների ռճական կիրառությունները: Ռճագիտության տեսանկյունից՝ այս հարցերին առաջին անգամ անդրադարձել են Գ. Զահուկյանը, Ֆ. Խլղաթյանը: Նրանք գրում են. «Գլխավոր ու երկրորդական նախադասությունների զուգորդման ու երկրորդական նախադասությունների կառուցման բազմազան եղանակները, կապակցության համանիշ միջոցները, հարաբերյալների առկայությունն ու բացակայությունը լեզվին հաղորդում են ռճական-արտահայտչական ճկունություն և հնարավորություն տալիս արտահայտելու մտքի նուրբ տարբերություններ»²²: Լեզվաբանները քննել են ձևի, չափ ու քանակի, տեղի, ժամանակի, պատճառի ու հետևանքի, պայմանի, զիջական կամ հակառակ հիմունքի, նպատակի պարագա երկրորդական նախադասությունները: Պ. Պողոսյանի դիտարկմամբ, ժամանակակից լեզվաբանությունը շարահյուսության մեջ առանձնացնում է երեք ենթաբաժին, այն են՝ բառերի կապակցություններ, պարզ նախադասություն, բարդ նախադասություն: Ռճագետը բնութագրել է յուրաքանչյուրի ռճական արժեքները: Տեսական դրույթներով, հետաքրքիր հարցադրումներով լեզվաբանը նոր որակ հաղորդեց հարցի քննությանը: Ըստ Լ. Եզեկյանի՝ այլ ու բազմաբնույթ է միակազմ նախադասությունների ռճական երանգավորումը հատկապես առօրյա-խոսակցական և գեղարվեստական ոճերում²³: Այսպես. անենթակա նախադասությունները նպաստում են խոսքի սեղմությանն ու հակիրճությանը, հիմնականում բնորոշ են առօրյա-խոսակցական ոճին, ժողովրդախոսակցական մտածողությանը: Բայական անդեմ նախադասություններից կիրառական մեծ հաճախականություն ունեն հատկապես հարցական հնչերանգ ունեցող կառույցները. գեղարվեստական ոճում հանդես են գալիս բացականչական հնչերանգով կառույցները, իսկ պաշտոնական առանձին ենթաոճերում գործածվում են հրամայական հնչերանգով կառույցները: Գոյականով արտահայտված անդեմ նախադասությունները տպավորություն են ստեղծում, որ կարծես ամեն ինչ կատարվում է աչքի առաջ, այսպես՝ /*Երևան: Մոսկովյան փողոց!*, /*Գարուն: Կեսօր: Հանրահավաք է!* և այլն: Միակազմ նախադասությունները,

²² Գ. Զահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ռճաբանություն, Ե., 1976, էջ 150:

²³ Լ. Եզեկյան, Ռճագիտություն, Ե., 2006, էջ 309:

մասնավորաբար, բայական անդեմ նախադասությունները, ինչպես նաև բարդ նախադասության բաղադրիչների կապակցության գոյվածական և շարահարական եղանակներն ունեն զգալի ոճական արժեք գեղարվեստական խոսքում: Վերջին հետազոտողները (Յու. Ավետիսյան, Ն. Ներսիսյան) նշում են, որ միակազմ նախադասությունների հետ հաճախ շփոթում են այն երկկազմ նախադասությունները, որոնց ստորորգյալն արտահայտված է միայ *և/* բայով²⁴: Թ. Շահվերդյանը ամենայն մանրամասնությամբ քննել է միակազմ և երկկազմ նախադասությունների վերախմաստավորումը դասական գրաբարում, ինչի համակարգված քննությունը հաջողված փորձ է մեզանում, նորություն գրաբարի ուսումնասիրության բնագավառում:

Քերականական ոճագիտական մտքի պատմության մեջ առանձնացվել են շարահյուսական հատուկ կառույցներ, որոնք Պ. Պողոսյանը բաժանել է՝ ա. գրական լեզվին հատուկ, բ. ժողովրդական հայերենին հատուկ շարահյուսական կառույցներ, գ. հատկաբանություն խմբերի՝ ներկայացնելով դրանց ոճական արժեք²⁵: «Հայերենում որոշակի տարածում են գտել մասնատված շարահյուսական կառույցները, որոնց պարագայում բարդ նախադասության ստորադաս անդամը (անդամները) ձևականորեն ու հնչյերանգով առանձնանում են գերադաս միավորից՝ ձեռք բերելով կարծեցյալ անկախություն: Քերականական նման երևույթի՝ նախադասության մասնատման արդյունքում առանձնացված շարահյուսական միավորները ձեռք են բերում լրացուցիչ ոճական արտահայտչականություն»²⁶:

2000-ական թթ.-ից հայ տեսական գրականության մեջ հատուկ ուսումնասիրության նյութ դարձավ տեքստագիտության (գրվածքագիտության, բնագրագիտություն) հարցերն ու խնդիրները²⁷: Մեր օրերում այս

²⁴ Առավել մանրամասն տե՛ս **Յու. Ավետիսյան**, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Ե., 2014, էջ 227:

²⁵ Տե՛ս **Պ. Պողոսյան**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Ե., 1990, էջ 371-382:

²⁶ **Թ. Շահվերդյան**, Ոճագիտություն, Ե., 2010, էջ 223:

²⁷ Տեքստի լեզվաբանության հարցերը արտերկրում բուռն քննարկվել են 1950-ական թթ.-ից: Այս ոլորտի հայտնի ուսումնասիրություններից են՝ **W. Strunk, E. White** "The Elements of Style" (1959), **Д. Лихачев** "Текстология. Краткий очерк" (1964), **Н. Weinrich** "Linguistic der Luge" (1966), **Ю. Лотман** "Структура художественного текста" (1970), **И. Гальперин** "Текст как объект лингвистического исследования" (1971), **В. Одинцов** "Стилистика текста" (1980), **О. Москальская** "Грамматика текста" (1981), **З. Тураева** "Лингвистика текста" (1986), **Л. Зильберман** "Лингвистика текста и обучение чтению

ուղղությամբ լուրջ աշխատանքներ են տարվում հատկապես Մատենադարանում: Վերջին հետազոտողները (Վ. Գաբրիելյան, Թ. Շահվերդյան, Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Դ. Գյուրջինյան և այլք) էականորեն հարստացրին հարցի քննությունը: Հ. Զաքարյանի, Յու. Ավետիսյանի գնահատմամբ, տեքստի ուսումնասիրության խնդիրն է՝ ներկայացնել դրա կառուցվածքային տեսակները և կառուցման ընդհանուր կանոնները, իսկ գործնական նպատակն է՝ նպաստել տեքստը ճիշտ ընկալելու (հասկանալու) և մտքերը արագորեն ու անսխալ շարադրելու հմտությունների ձեռքբերմանը²⁸: Վ. Գաբրիելյանը ոլորտի այն առաջնեկն է, որը փորձել է տեսականորեն համակարգել նյութը և որոշակիորեն դասակարգել այն: Գիտնականը բնութագրել է տեքստը և իր տեսակները, այդ թվում՝ ուսումնական-մանկավարժական տեքստերը (փոխադրություն, շարադրություն, ռեֆերատ, զեկուցում և այլն), տեղեկատվական տեքստեր (նամակ, բացիկ, հեռագիր, ազդ-հայտարարություն, գովազդ, հրավիրատոմս և այլն), աշխատանքային կամ պաշտոնական գործավարության տեքստերը (դիմում, ինքնակենսագրություն, բնութագիր, հրաման, կարծիք, երաշխավորություն և այլն), քաղաքացիական գործառույթներ իրականացնող տեքստերը (պայմանագիր, լիազորագիր, կտակ, համաձայնագիր և այլն), ստեղծագործական տեքստերը (բանաստեղծություն, պոեմ, առասպել, պատմվածք, դրամա, վեպ, վիպակ և այլն): Կարևորություն է տրվել ոչ միայն տեքստերի շարադրմանն ու խմբագրմանը, այլև տեքստի արտաքին տեսքին²⁹: Գիտնականի աշխատությունը լայն արձագանք է ունեցել:

Վերջերս՝ 2022 թ.-ին, լույս տեսավ Տ. Մարաբյանի «Պարզ նախադասության ուսուցումը» գիրքը: Հեղինակը հանրակրթական դպրոցներում իրականացրել է տարաբնույթ փորձեր, մշակել ներդրման համակարգ: Ըստ նրա՝ պարզ նախադասության ուսուցման գործընթացում դասավանդման ակտիվ մեթոդների կիրառմամբ զարգացել է սովորողների լեզվամտածողությունը, ստեղծագործական կարողությունները, կապակցված խոսքը³⁰: Հետաքրքիր հարցադրումներով ուշագրավ այս գիրքը դառնում է այս բնագավառի վերջին գիտական ուսումնասիրությունը:

английской научной литературы" (1988), **К. Турабян** "A Manual for Writers of Term Papers and Dissertations" (1996), **Н. Валгина** "Теория текста" (1998), **Г. Солганик** "Стилистика текста" (2000) և այլն:

²⁸ Տե՛ս **Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան**, Ոճագիտություն: Տեքստագիտություն: Հայոց լեզվի պատմություն. Եր., 2018, էջ 60:

²⁹ Առավել մանրամասն տե՛ս **Վ. Գաբրիելյան**, Գրավոր խոսք, Եր., 2012:

³⁰ **Տ. Մարաբյան**, Պարզ նախադասության ուսուցումը, Ե., 2022, էջ 198:

Լիահույս ենք, որ շարահյուսական ոճագիտության ոլորտը չի սահմանափակվի այս հետազոտությամբ, և հետագա ուսումնասիրողները կհարստացնեն հարցի քննությունը:

Եզրակացություն

Այսպիսով, քերականական ոճագիտության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվել են շատերը, գրվել են տարբեր աշխատություններ, իսկ դրանց վերաբերյալ ուսումնասիրությունները շարունակվում են նաև այսօր: Քերականական ոճագիտությանն առնչվող հարցերը քննվում են ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Ձևաբանական ոճագիտությունում՝ խոսքի մասերի համակարգում ոճական ավելի մեծ հնարավորություններ ունեն նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը, մասնավորաբար, գոյականը, ածականը, դերանունը, բայը, մասամբ նաև վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերը: Շարահյուսական ոճագիտությունում՝ գեղարվեստական խոսքում ոճական հնարավորություններով աչքի են ընկնում միակազմ և երկկազմ նախադասությունները, շարահյուսական կապակցության եղանակները:

Вальтер Берберян

Из истории грамматической стилистики

Заключение

Ключевые слова и выражения: грамматическая стилистика, морфологическая, синтаксическая стилистика, части речи, экспрессивность, вариант, стилистическое значение.

В ходе развития языкознания принято останавливаться на одном моменте и подводить итоги с экспертной точки зрения. Армянская стилистическая мысль развивалась более полувека. Написаны теоретические монографии, различные статьи, пора проявить четкий аналитический настрой. Особенно если принять во внимание бурное развитие стилистики и культуры речи, то, на наш взгляд, необходимо сблизить имеющиеся с определенными оценками. Ученые рассматривают фонетическую, лексическую и грамматическую стилистику отдельно. Эти направления развиваются очень быстро. Необходимо постоянно следить за достижениями мирового языкознания. Армянская стилистическая мысль должна отражать высокий уровень мировой науки того времени. Кроме того, важно представить историю нашей стилистической мысли.

В статье представлены история грамматической стилистики (1950-е годы до наших дней). Грамматическая стилистика изучает стилистические возможности грамматических структур. Выделяют морфологическую и

синтаксическую стилистические группы, каждая из которых имеет свое выражение. В части морфологической стилистики ставится цель выявить и представить стилистические возможности частей речи, их грамматических порядков, морфологических вариантов, а в части синтаксической стилистики изучить выразительность синтаксических порядков и единиц. Это узкие профессиональные сферы. Заметно, что стилистические возможности морфологических порядков ограничены, синтаксическая система обладает большими и широкими стилистическими возможностями. Отметим, что последний также изучает речь. Были изучены работы, написанные как на морфологические, так и на синтаксические стилистике, проанализированы положения в различных исследованиях. Методологической основой является сочетание и анализ существующих теоретических положений.

Valter Berberyan

From the history grammatical stylistics

Conclusion

Key words and expressions: grammatical stylistics, morphological, syntactical stylistics, parts of speech, expressiveness, variant form, stylistic value.

It is customary to stop at a moment in the course of the development of linguistics and to summarize the achievements with an examination point of view. Armenian stylistic thought has been developing for more than half a century. Theoretical monographs, various articles have been written, and it is time to show a clear analytical attitude. Especially if we take into account the rapid development of stylistics and speech culture, then, we think, it is necessary to bring together the existing ones with certain assessments. Scientists examine phonetic, lexical, and grammatical stylistics separately. These fields are developing very quickly. It is necessary to constantly follow the achievements of world linguistics. Armenian stylistic thought should reflect the high level of global science of the time. Apart from this, it is important to present the history of our stylistic thought.

The article presents the history of grammatical stylistics (from the 1950s to the present day). Grammatical stylistics studies the stylistic possibilities of grammatical structures. The groups of morphological and syntactical stylistics are distinguished, each of which has an expression uniqueness. We have studied the works written morphological, syntactical stylistics, analyzed the provisions in various researches. The methodological basis is the combination and analysis of existing theoretical provisions.

Օգտագործված գրականություն

1. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Եր., 2014:
2. Ավետիսյան Յու., Սարգսյան Լ. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Բ, Եր., 2015:
3. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2012:
4. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Եր., 2006:
5. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Ոճագիտություն: Տեքստագիտություն: Հայոց լեզվի պատմություն, Եր., 2018:
6. Շահվերդյան Թ., Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Եր., 2007:
7. Շահվերդյան Թ., Ոճագիտություն, Եր., 2010:
8. Մարաբյան Տ., Պարզ նախադասության ուսուցումը, Եր., 2022:
9. Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Եր., 1992:
10. Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Եր., 1959:
11. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Եր., 1990:
12. Զահուկյան Գ., Խղաթյան Ֆ., Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Եր., 1976:
13. Վահանյան Գ., Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ, Եր., 1956:
14. Վիրաբյան Ն., Մարգարյան Լ., Հայոց լեզու. Ոճաբանություն, Եր., 2007:

Խմբագրություն է ուղարկվել 18.05.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 06.06.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 29.09.2023թ.